լողացնել։ Այս էլ սակայն հնում երևի չէր թույլ տրվում։ Տանից ննջեցյալին դուրս էին տանում կանայք, ինչպես և լողացնելուց հետո, եթե ննջեցյալը անմիջապես չէր փոխադրվում եկեղեցի, կրկին կանայք էին նրան ներս բերում։ Սա թվում է թե նորից մի արձագանք է մայրիշխանության, երբ կինն էր դրսից մարդ ընդունողն ու ճանապարհ դնողը։

Ամեն կերպ աշխատում էին, որ ննջեցյալից հեռացվող կեղտը չդիպչի անմիջապես գետնին։ Այդ նպատակով նրան պառկեցնում էին տախտակների վրա մի տաշտ տակին զետեղելով։ Նույնիսկ այն կուժը, որի մեջ աղբյուրից բերած ջուրը ադէրը՝ քահանան օրհնում էր, չպիտի դիպչեր գետնին։ Այդ կուժը հետո մինչև օխտը՝ յոթերորդ օրը մահվանից հետո, չպիտի գործածվեր, իսկ այն ամանները, որոնցով ջուրն էր ածվում ննջեցյալի վրա, պիտի կոտրվեին։ Տղամարդուն լողացնում էին տղամարդիկ, կին-մարդուն՝ կանայք։ Լողացնողները պետք է ձեռներին քսակներ կամ սավանից մի կտոր անցկացնեին և վերջը այդ ձեռնոցները կամ կտորը դուրսը չթողնեին, այլ դնեին ննջեցյալի սեռական անդամի մոտ։ Լողացնելուց ավելացած օրհնված ջրով լվանում էին տանեցոց և գյուղում եղած հիվանդների ոտները—տանեցիներին մահվան մերձենալուց առաջացած վախից ու վշտից, իսկ հիվանդներին՝ հիվանդությունից, որը առաջ է գալիս շար ոգու մերձենալուց, լվանալու նպատակով։ Բոլոր այս մոգական արարողությունները նման են այն միջոցառումներին, որոնցով, օրինակ՝ Սիբիրի շամանները հեռացնում էին հիվանդությունը մարդու վրայից, օրինակ՝ ծծելով և դեն թքելով հիվանդությունը։

Լողանալուց հետո ննջեցյալին պատանքում էին։ Սիսիանում այս սովորությունը պատճառաբանում էին նրանով, իբր թե՝

«Առանց պատանքի չի կարելի ներկայանալ Քրիստոսին»։

Սակայն ճշմարտությանն ավելի մոտեցող բացատրությունը պիտի լինի այն, որ այդտեղ պահպանվել է նախնական մտայնության հետքը, որով թաղումը նկատվում էր որպես վերադարձ մայր երկրի արգանդը, իսկ մոր արգանդում երեխան լինում է ընկերքով պատված։ Այս պատանքը երեխայի ընկերքի սիմբոլացումն էր։

Պատանքված ննջեցյալին փաթաթում էին մի կարպետի մեջ և դնում եկեղեցուց բերած համայնական պատգարակի՝ նաժի վրա։ Վերջին տասնամյակներում սկսել էին դնել դագաղի մեջ առանց կարպետի, երբեմն մերկ, բայց պատանքված, ավելի հաճախ նաև ամբողջ հանդերձանքով։ Եթե նաժը տանում էին ոչ թե դիակը լողացնելու տեղից, այլ կրկին տուն ներս տանելուց հետո, նաժը տանից դուրս հանելիս, այս անգամ տեղից վերցնում էին տղամարդիկ, դուռը երեք անգամ փակում և երեք անգամ բացում էին[88] կամ փակած դռանը երեք անգամ նաժը զարնում էին։ Սա թույլ հիշատակ է հնում Հայաստանում ևս տարածված իրանական-զրադաշտական սովորության[89], որը պահանջում էր ննջեցյալին տանից դուրս հանել ոչ թե դռնով, որով կատարվում էր ամենօրյա երթ և եկը, այլ պատի մեջ քանդած բացվածքով. նա հետո նորից վերաշարվում էր։ Այս անում էին այն մտադրությամբ, որ, եթե

---

[88] Արծվանիկ։

[89] Ննջեցյալին ոչ թե դռնով, այլ հատուկ շինված բացվածքով տունից դուրս տանելը ընդունված է նաև Հյուս. Ամերիկայի էսկիմոսների և հնդկացիների. Աֆրիկայի հոտենտոտների, բուշմեննների, կիմբունդա և այլ ժողովուրդների մեջ, Հնդկաստանում, Ֆիջի և Բալի կղզիների վրա, սամոեդների, տունգուզների, հին չինացիների մոտ, մինչև այսօր էլ Դանիայում։